ISSN 1829-4510

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՀԱՏՈՐ 9
2017

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նվիրվում է արաբագիտության ամբիոնի դասախոսներ Սարգիս Պողոսյանի, Հովհաննես Ասատրյանի և Հարություն Գրիգորյանի լուսավոր հիշատակին

№ 9

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

YEREVAN STATE UNIVERSITY

JOURNAL
OF
ARABIC STUDIES

In the memory of
Sargis Poghosyan,
Hovhannes Asatryan,
Harutyun Grigoryan

№ 9

ISSN 1829-4510

YEREVAN
YSU PRESS
2017

Հրատարակվում է
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Դավիթ Հովհաննիսյան – բ.գ.թ., պրոֆեսոր (նախագահ)

Մարգարիտա Խաչիկյան - բ.գ.դ., պրոֆեսոր

Ռուբեն Կարապետյան - պ.գ.դ., պրոֆեսոր

Արշակ Փոլադյան - պ.գ.դ., պրոֆեսոր

Գուրամ Չիկովանի - բ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)

Սամվել Կարաբեկյան - բ.գ.թ., դոցենտ

Մուշեղ Ասատրյան –PhD (Կանադա)

Սոնա Տոնիկյան – բ.գ.թ., դոցենտ

Մարատ Յավրումյան - բ.գ.թ., դոցենտ

Հայկ Քոչարյան – պ.գ.թ., դոցենտ

Արայիկ Հարությունյան - պ.գ.թ.

© Երևանի պետական համալսարան, 2017

Published by the decision of the scientific
council of the Oriental Studies
Department, Yerevan State University

Editorial Board

Prof. David Hovhannisyan (editor in chief)

Prof. Margarita Khachkyan

Prof. Ruben Karapetyan

Prof. Arshak Poladyan

Prof. Guram Chikovani (Georgia)

Dr. Samvel Karabekyan

Mushegh Asatryan, PhD (Canada)

Dr. Sona Tonikyan

Dr. Marat Yavrumyan

Dr. Hayk Kocharyan

Dr. Arayik Harutyunyan

© Yerevan State University, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 11

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աննա Դանիելյան
ԶԵՂՉՈՒՄԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐԱԲԵՐԵՆԻ TAXFĪF ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 13-27

Խադիջե Ահմադ Մեհրաբի, Աննա Դանիելյան
ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՆԻԿԻ ԵՎ ՀԱՐԱԿՑՎԱԾ ԱՆՎԱՆ ԶԵՂՉՈՒՄԸ ՂՈՒՐԱՆՈՒՄ 28-46

Հայկ Հարությունյան
ՀԱՐՖԸ՝ ՈՐՊԵՍ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՄՆԻԿ ԱԼ-ԽԱԼԻԼ ԻԲՆ ԱՀՄԱԴԻ «ՔԻԹԱԲ ԱԼ-ԱՅՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 47-59

Մարգարիտա Մարգսյան
’INNA ՄԱՄՆԻԿԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՁԵՎԱ-ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 60-72

Մերվաթ Ջումա Աբդալլահ Օսման
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԱԲԱԿԱՆԱՑՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՐԱԲԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 73-81

Մերվաթ Զումա Աբդալլահ Օսման
ԱՐԱԲԱԿԱՆԱՑՄԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԸ 82-97

Նիկոլայ Գաբրիելյան
ՄԱՍԴԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԱԾԱԿԱՆԻ ԽՆԴԻՐՆ
ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ 98-106

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբու Զահիդ Ալի Մուսա
«ՀԱՄԱՍ» ՇԱՐԺՄԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆԻ
ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՍԼՈՅԻ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 107-131

Անի Դավթյան
«ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»
ՍԻՐԻԱՅՈՒՄ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ
ՁԱԽՈՂՈՒՄԸ՝ ՎԵՐՋ ԴՆԵԼՈՒ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ
ՎԱՅԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 132-139

Արթուր Իսրայելյան, Զարուհի Համազասպյան
ԽԱՉԱԿՐԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՏԱՐՏՈՒՍԻ, ԼԱԹԱՔԻԱՅԻ
ՀԱՄԱՅԻ ԵՎ ՀՈՄՍԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ 140-146

Արսեն Զուլֆալակյան
ԱԴԱՆԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 2002 Թ. 147-169

Գայանե Մկրտումյան
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ 170-183

Էդիտա Ասատրյան
ԵԳԻՊՏԱ-ՍԱՈՒԴԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՄԵՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԸ 184-199

Խաչիկ Ազիզյան
ԵԳԻՊՏՈՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ 200-218

Մարիամ Էլմասյան
ԱԲԴԱԼԼԱՀ ԻԲՆ ԱԼ-ՄՈՒԿԱՖԱՅԻ ԴԵՐԸ
ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ 219-235

CONTENT

FOREWORDS 11-12

LINGUISTICS

Anna Danielyan
THE TERMS FOR DESCRIBING ELLIPSIS IN THE CONTEXT OF TAXF^F CONCEPTION IN ARABIC LANGUAGE 13-27

Khadijeh Ahmad Mehrabi, Anna Danielyan
ELLIPSIS OF PREPOSITIONS AND PREPOSITIONAL CONSTRUCTIONS IN THE QUR'ĀN 28-46

Hayk Harutyunyan
HARF AS PHONETIC AND MORPHOLOGICAL PARTICLE IN «KITAB AL-AYN» OF KHALIL IBN AHMAD 47-59

Margarita Sargsyan
ABOUT THE MORFHOSYNTACTIC AND SEMANTIC PECULIARITIES OF THE VERB-LIKE PARTICLE 'INNA 60-72

Mervat Juma Abdallah Othman
THE ORGANIZATIONS WORKING ON THE ARABIZATION OF SCIENCES IN ARAB COUNTRIES AND THE PERSPECTIVES OF THE ARABIZATION 73-81

Mervat Juma Abdallah Othman
HISTORIC MILESTONES OF ARABIZATION 82-97

Nikolay Gabrielyan
THE PROBLEM OF EXPRESSING THE ADJECTIVE
VIA MASDAR IN ARABIC 98-106

HISTORY AND LITIRATURE

Abu Zayd Ali Musa
THE POSITION OF THE HAMAS MOVEMENT REGARDING
THE PALESTINE LIBERATION ORGANIZATION AND
THE OSLO ACCORDS 107-131

Ani Davtyan
RESPONSIBILITY TO PROTECT IN SYRIA: THE FAILURE
OF INTERNATIONAL COMMUNITY TO STOP THE MASS
ATROCITIES 132-139

Artur Israyelyan, Zaruhi Hamazaspyan
CRUSADER MONUMENTS IN TARTUS, LATAKIA, HOMS
AND HAMA GOVERNORATES OF SYRIA 140-146

Arsen Julfalakyan
ADANA AGREEMENT AND TURKISH-SYRIAN
RELATIONS BY 2002 147-169

Gayane Mkrtumyan
ARMENIAN CHURCH IN THE MIDST OF
THE ARMENIAN-ARAB RELATIONS 170-183

Edita Asatryan
THE EGYPTIAN-SAUDI CONFRONTAION AND
THE CIVIL WAR IN NORTH YEMEN (1962-1970) 184-199

Khachik Azizyan
THE REFORMS IMPLEMENTED BY MUHAMMAD ALI IN
THE STATE MANAGEMENT SYSTEM OF EGYPT.....200-218

Mariam Elmasyan
ABDALLAH IBN AL-MUKAFFA'A AND HIS ROLE IN FORMATION
OF THE NEW KNOWLEDGE AND ITS ADAPTATION.....219-235

’INNA ՄԱՍՆԻԿԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՁԵՎԱ-ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Մարգարիտա Սարգսյան
ԵՊՀ արաբագիտության ամբիոնի աշխատակից
margaritasargsyan@ysu.am

Բանալի բառեր՝ *բայանման մասնիկներ, ’inna, իմաստաբանական առանձնահատկություն, ձևա-շարահյուսական առանձնահատկություն, դրական պատասխանական բառ։*

Հոդվածի հիմնական նպատակն է վեր հանել այն հիմնական իմաստաբանական և ձևա-շարահյուսական առանձնահատկությունները, որոնք կապված են ’inna հաստատական երանգ հաղորդող բայանման մասնիկի հետ։

Մասնիկները՝ որպես սպասարկու բառեր, իրենց ուրույն տեղն են զբաղեցնում լեզվի տարբեր մակարդակներում։ Դրանք որոշակի եղանակավորող, հուզական կամ հուզաարտահայտչական երանգ են հաղորդում բառերին, նախադասության տարբեր անդամներին կամ ամբողջ ասույթին։ Տեքստում մասնիկների իմաստներն արտահայտվում են վերջինիս սահմաններում իրացված հաղորդակցական ակտի շրջանակներում։ Դրանք երբեմն համարվում են նաև դիսկուրսիվ բառեր, ինչպես նաև թեմա-ռեմատիզատորներ՝ նախադասության ակտուալ անդամատման հիմնական միջոցներ, որոնց գործառույթն է ասույթի որևէ բաղադրիչի առանձնացումն ու դրա վրա ուշադրության կենտրոնացումը։ Շարահյուսական մակարդակում մասնիկները կարող են թափանցել նաև կապերի գործունեության ոլորտ՝

«կազմակերպելով» պարզ և բարդ նախադասությունների տարբեր կառույցներ[1]:

Արաբերենում խոսքի մասերը երեքն են՝ բայ (fi‘l), անուն (’ism) և մասնիկ (ḥarf) [2] : Իրենց ունեցած իմաստաբանական և ձևաշարահյուսական գործառույթով առանձին խումբ են կազմում բայանման մասնիկները [3] (**الحروفُ المشبَهةُ بالفعل** – al-ḥurūf al-mušabbaha bil-fi‘l):

هذه الحروف تنصب الاسم وترفع الخبر؛ لشَبَهها بالفعل. وذلك من وجهَين: أحدهما من جهة اللفظ، والآخر من جهة المعنى. فأمّا الذي من جهة اللفظ، فبناؤُها على الفتح كالأفعال الماضية. وأمّا الذي من جهة المعنى، فمن قبل أن هذه الحروف تطلب الأسماءَ وتختصّ بها، فهي تدخل على المبتدأ والخبر، فتنصب المبتدأ، وترفع الخبر؛ لِما ذكرناه من شَبَه الفعل، إذ كان الفعل يرفع الفاعل، وينصب المفعول. وشُبّهت مِنْ الأفعال بما تقدّم مفعوله على فاعله، فإذا قلت: "إنّ زيدًا قائمٌ"، كان بمنزلةِ "ضرب زيدًا عمرٌو [4]

Այս մասնիկները նասբավորում[5] են անունը և անփոփոխ են թողնում բայը՝ և՛ արտասանական, և՛ իմաստային նմանություն ունենալով բայահիմքի հետ: Արտասանական նմանությունը պայմանավորված է վերջավոր fatha ձայնանիշի առկայությամբ, իսկ իմաստային նմանությունը՝ հաջորդիվ անուն պահանջելու և կառավարելու գործառույթով, այն նախադրվում է անվանական նախադասության ենթակային և ստորոգյալին և նասբավորում է ենթական՝ ստորոգյալը թողնելով անփոփոխ, այդ պատճառով այն նմանեցվում է բային, քանի որ բայական ստորոգյալն է անփոփոխ թողնում գործող եթական և նասբավորում խնդիրը: Նմանվում են

[1] Стародумова Е. А., Частицы русского языка, Владивосток, 2002, стр. 3.

[2] Արաբերենում ḥarf են անվանվում նաև տառերը:

[3] Արաբական լեզվաբանական ավանդույթում բայանման մասնիկները հինգն են՝ ’inna՝ իսկապես, անշուշտ, ʼanna՝ որ, ka’anna՝ կարծես, lakinna՝ սակայն, la‘alla՝ գուցե, երևի և layta՝ երանի:

[4] إبن يعيش، شرح المفصل، دار الكتب، بيروت، 2001، ص521

[5] Տվյալ դեպքում համապատասխանում է հայերենի հայցական հոլովին:

այն բայերին, որոնց խնդիրը նախադրված է գործող ենթակային, ինչպես ʾinna zeydan qāʾimun - ḍaraba zeydan ʿamrū*:*

Իմաստաբանական մակարդակում այս մասնիկները հաստատականություն, իղձ, նմանություն, նպատակ, կասկած և այլ իմաստային երանգներ են հաղորդում ողջ ասույթին:

Ձևա-շարահյուսական մակարդակում կարելի է նկատել բային նմանվելու այլ հատկանիշներ ևս, մասնավորապես՝

- այս մասնիկներին հավելվող հարֆերի (hurūf zāʾida) կցման հնարավորությամբ, օրինակ՝ ***lak***inna (սակայն), ***li'***anna (քանի որ):
- առաջին դեմքի կցական դերանունից առաջ nūn al wiqāya–ի առկայությամբ՝ ʾinna***nī*** (իսկապես որ ես), որը կիրառվում է բայերի հետ՝ kataba***nī*** (նա գրեց ինձ):

Բայանման մասնիկների խումբը գլխավորող ʾinna մասնիկը դրսևորում է իմաստային տարբեր երանգներ՝ կախված նախադասության տեսակից, որում այն կիրառվում է: Հաստատական նախադասություններում այն արտահայտում է *իսկապես, անշուշտ, անկասկած* նշանակությունները, որի միջոցով խոսողն իր համոզվածությունն է արտահայտում հաղորդման վերաբերյալ, իսկ հարցական նախադասություններում՝ տարակուսանք կամ կասկած[6].

... ʾInna llaha ʿalā kulli šayʾin qadīrun, ʾinna llāha ʿazīzun ḥakīmun ... (Ղուրան 2:20) - Աստված, անշուշտ, ամենակարող է, ամենախոհեմ[7]:

... Našhadu ʾinnaka larasūlu llāhi ... (Ղուրան 63:1) – Մենք վկայում ենք, որ, անկասկած, դու ես Աստծո առաքյալը:

---

[6] Bloch A.A, Studies in Arabic Syntax and Semantics, Otto Harrassowitz. Wiesbaden 1986, p. 103:

[7] Թարգմանություններում օգտագործվել է Ղուրանի՝ Ի. Յու.Կրաչկովսկու կատարած ռուսերեն թարգմանությունը:

... A'inna lanā la'ajran..., ... a'innā lamubʿaṭūnā? (Ղուրան 26:41, 23:82) - Մի՞թե իսկապես կլինի պարգևատրում մեզ համար, արդյո՞ք իսկապես կա հարություն մեզ համար:

Միջնադարյան արաբ քերականագետներից Սիբավեյհին (մահ. 797 թ.) և Իբն Յաիշը (մահ.1196 թ.) այս մասնիկի հիմնական իմաստաբանական գործառույթն են համարում շեշտադրումը, հաստատումը և ամբողջ ասույթին հաստատական իմաստ հաղորդելը ('inna lita'kīdi l-jumlati[8]).

Zaydun munṭaliqun - Զեյդը հեռանում է: - 'inna Zaydan munṭaliqun - Զեյդն իսկապես, անկասկած հեռանում է:

Այն կարող է կատարվել նաև նախադասության կրկնության միջոցով (ka'annahu fī ḥukmi l-mukarrari) - Zaydun qā'imun. Zaydun qā'imun[9]:

Մեկ այլ մոտեցմամբ այս մասնիկն իր ունեցած իմաստաբանական գործառույթներով կարող է դասվել այնպիսի միավորների շարքին, ինչպիսիք են.

- *qad* մասնիկը, որն անցյալ ժամանակաձևի բայի հետ կիրառվելիս հաստատական երանգ է հաղորդում ողջ նախադասությանը - Kuntu arjū majī'ahu fa*qad* jā[10]'- Ես հույս ունեի, որ նա կգա, և նա *իսկապես* եկավ:
- wallāhi, laʿamrī (Աստված վկա, անկասկած) երդումներ արտահայտող կապակցությունները,
- շեշտող *lam*-ը - Lalmautu xayrun min ḥayatin lā ġamḍin[11] - Անշուշտ մահը գերադասելի է անհորոշությունից:

---

[8] إبن يعيش، شرح المفصل، دار الكتب، بيروت، 2001، ص 526

[9] Նույն աշխ., էջ 534:

[10] Wright W. A grammar of the Arabic language, Cambridge 1896թ., էջ 286:

[11] Bloch A.A, Studies in Arabic Syntax and Semantics, Otto Harrassowitz. Wiesbaden 1986, p. 104:

Նշվում է, որ ’inna-ի իմաստաբանական գործառույթն իրեն հաջորդող գոյականով կամ դերանունով իրացված թեմայի հաստատումն ու շեշտումն է[12]: Մեկ այլ տեսակետի համաձայն վերոնշյալ միավորներն իրենց կառուցվածքային և շարահյուսական գործառույթներով արմատապես տարասեռ են և միավորված են միայն ողջ նախադասությանը կամ ասույթին հաստատական երանգ հաղորդելու ունակությամբ՝ ի տարբերություն մյուս՝ նախադասության որևէ անդամ շեշտող միավորների[13]: Նախադասության այս կամ այն անդամի շեշտումն արաբերենում կարող է իրացվել այլ միջոցներով, ինչպես, օրինակ, նախադասության անդամների տեղափոխությունը.

- - wa մասնիկի միջոցով

*wa*llaḏīna yamkurūna sayi’āti lahum ‘aḏābun šadīdun (Ղուրան 35:10) - *նրանք, ովքեր* չարագործություն են սերմանել, կստանան իրենց պատիժը (wa մասնիկն ունի իրենից հետո եկող անունը շեշտելու գործառույթ):

- wa al-zāniyatu lā yankiḥuhā illā zānin - Շնացողին ոչ ոք կնության չի առնի, բացի իր նմանից (Ղուրան 24:3):
- ammā... fa... (ինչ վերաբերում է..., ապա...) արտահայտության միջոցով

Ammā qatlan falastu qātilan[14] - Ինչ վերաբերում է սպանությանը, ապա ես մարդասպան չեմ:

- Շարադասության շրջման միջոցով:

ʿalayhi tawakkaltu wa’layhi unībun (Ղուրան11:88) - Նրան եմ ես ապավինում, նրան եմ մեղանչում

---

[12] Fischer W., Daß Sätze mit an und anna, ZAL, 1978, էջ 24-31:

[13] Bloch A.A., Studies in Arabic Syntax and Semantics, Otto Harrassowitz. Wiesbaden 1986, էջ 105:

[14] Reckendorf H. Arabische Syntax. Heidelberg, 1921, էջ 371:

ʿIyyaka naʿbudu (Ղուրան 1:5)	Քե՛զ ենք մենք երկրպագում:
Tamīmiyyun anā[15]	Ե՛ս եմ թամիմ ցեղից:

Հետաքրքիր է այս մասնիկի՝ որպես ինքնուրույն «այո, իհարկե» նշանակությամբ կիրառությունը, որտեղ այն ստանձնում է պատասխանական բառի գործառույթ.

Yaqulna šaybun qad ʿalāka waqad kabirta, faqultu *inna*[16]. - Ասում են՝ ճերմակել ես ու մեծացել, և ես ասում եմ՝ *Այո*, («qad ʿalānī waqad kabirtu, - ճերմակել եմ ու մեծացել», այսինքն՝ համաձայնում է, որ իսկապես այդպես է, ինչպես ասում են): Այս նախադասությանը համարժեք են.

ʾAqāma Zaydun [17] ? (Զեյդն արդյո՞ք կանգնել է), որի պատասխանը կլինի *Naʿam-Այո*: (qāma կանգնել է՝ որպես նախորդող մտքի հաստատում):

Qāla bnu Faḍālata laʿana llāhu nāqatan ḥamalatnī ilayka, qāla ibnu z-Zubayri *inna* wa rākibahā.[18] - Իբն Ֆադալն ասաց. «Աստված անիծեց ինձ քեզ մոտ բերող էգ ուղտին, ինչին Իբն Զուբեյրը պատասխանեց. «*Այո*, նրա հեծյալին էլ:»

Qālū ġadarta faʾaqūlu ʾ*inna*. wa rubbamā nāla lʿulā wašafā al-ġalīla al-ġādiru[19].- Ասում են՝ նենգաբար ես վարվել, ասում եմ՝ *այո՛*, բայց նենգ մարդն ավելի մեծ բարձունքի է հասնում:

Qālū axifta faqultu ʾ*inna* wa xīfatī mā in tazālu manūṭatan birajāʾī[20]:- Ասում են՝ վախեցել ես, ասացի. «*Այո,* բայց վախս ամբողջ ժամանակ հույսով էր պարուրված»:

---

[15] Fleischer H.L., Kleinere Schriften, Vol.1, Leipzig, 1885, s. 7.

[16] إبن يعيش، شرح المفصل، دار الكتب، بيروت، 2001، ص 452

[17] إبن يعيش، شرح المفصل، دار الكتب، بيروت، 2001، ص 457

[18] Reckendorf H. Arabische Syntax. Heidelberg 1921, s. 127.

[19] Նույն տեղում:

Wa qā’ilatin asīta faqultu jayrin asiyyun ’innani min ḏāka, ’*inna*[21]

Ասացին՝ տխուր ես վերջերս. Ասացի. «Իսկապես այդպես է, *այո*»:

Օրինակներից երևում է, որ ’inna մասնիկով կարող են զեղչվել նախադասության այն հատվածները, որոնք հաստատական երանգ են ստանում այս մասնիկի միջոցով, իսկ զեղչված մասն արդեն ընկալելի է համատեքստից: Սա հնարարավոր է միայն այն դեպքերում, երբ այս մասնիկը հանդես է գալիս «այո» նշանակությամբ և կարող է փոխարինվել այդ նշանակությունն արտահայտող այլ բառերով (naʿam, ’ajal[22]- այո, իհարկե):

Saūfa taḏhabu, ’ajal[23]. - Գնալու ես, այո՛:

Hal taḏhabu? naʿam[24]. - Գնալու ե՞ս: - Այո:

Կարելի է ենթադրել, որ այս մասնիկը հաստատական իմաստ արտահայտող ինքնուրույն միավոր է, այսպես կոչված՝ «բառ-նախադասություն»[25]: ’Inna-ն, փաստորեն, որպես առանձին միավոր հադես է գալիս հետևյալ գործառույթներով. մի կողմից որպես հաստատական պատասխանական բառ երկխոսություններում, մյուս կողմից՝ խոսողի կողմից իր իսկ մտքի ճշմարիտ լինելն ընդգծելու միջոց, հաստատող բառ-մասնիկ (դրական պատասխան):

---

[20] Howell M.S., A grammar of the Classical Arabic language, Allahabad, 1880-1911, vol. 1, p. 21:

[21] Նշվ. աշխ., h. 3, էջ 56:

[22] naʿam (այո) դրական պատասխանական բառը հաստատում է հարցական նախադասությունը, ajal (այո) դրական պատասխանական բառը կիրառվում է որպես հաստատական նախադասության հաստատատում:

[23] Wright W., A grammar of the Arabic language, Cambridge, 1896, p. 283:

[24] Նշվ. աշխ., էջ 283

[25] Bloch A.A., Studies in Arabic Syntax and Semantics, Otto Harrassowitz. Wiesbaden. 1986, p. 109:

Նախադասության նույնատիպ շեշտում կարելի է կատարել նաև ժխտման միջոցով, որտեղ ’inna-ն նույնացվում է bala (այո) ժխտումը հերքող մասնիկի հետ.

Lam yaqum Zaydun, bala[26] - Զեյդը չի կանգնել, *այո՛*:

’A lastu birabbikom, qālū bala[27] - Ես քո տերը չե՞մ: -Այո՛, [չես]:

Այսպիսով, այս մասնիկի ինքնուրույն կիրառությունն «*այո, իհարկե*» հաստատող նշանակությամբ հանդիպում է ավելի շատ միջնադարյան տեքստերում՝ որպես հաստատող բառ-նախադասություն:

Հարկ է նշել, որ միջնադարյան տեքստերում, շնորհիվ «գոյություն ունենալ», «լինել», բառացի՝ «նայիր», «տես»[28] նշանակություններն արտահայտելու հնարավորության, ’inna մասնիկը համարվում է նաև լեզվական դեիկտիկ ցուցիչ՝ մատնանշելով տարածության և ժամանակի մեջ գոյություն ունենալու, լինելու իրական փաստը, ինչպես նաև հաղորդակցական ակտի անդամներին (անգլերենում, օրինակ, There is John. Ջոնն է (բոց.՝Ջոնը կա), Watch out, there is a snake.(բոց.՝ Ուշադիր եղի՛ր, օձ կա), որտեղ նշվում է Ջոնի կամ օձի լինելու փաստը): Դիտարկենք հետևյալ օրինակները.

’Inna mālan wa *’inna* waladan wa *’inna* ‘adadan[29].

Կա գումար, *կա* տղա և *կա* բազմություն:

Hal lakum aḥadun min al nāsi ‘alaykum.

’Inna Zaydan wa *’inna* ‘Amran[30].

---

[26] Wright W., նշվ.աշխ., էջ 286:

[27] Նշվ.աշխ., էջ 286:

[28] Նշվ. աշխ., էջ 284:

[29] إبن يعيش، شرح المفصل، دار الكتب، بيروت، 2001، ص 25

[30] إبن يعيش նշվ.աշխ., էջ 258:

Կա՞ քեզ պաշտպանող մեկը։ Մարդիկ քո դեմ են դուրս եկել։

Զեյդն ու Ամրն են (կան)։

’Inna maḥallan wa *’inna* murtaḥalan, wa*’inna* lissafari iḏ maḍūw mahalan[31].

Կա մնալու և մեկնելու ժամանակ, և, անշուշտ, ճամփորդների համար կա կարճատև դադար տալու վայր։

Այս նախադասությունները կարելի է դիտարկել որպես դեիկտիկ-գոյաբանական։ ’Inna Zaydan wa ’inna ‘Amran նախադասությունն ավելի նախընտրելի է մեկնաբանել որպես դեիկտիկ, քանի որ այստեղ Ամրն ու Զեյդը տեսանելի են տվյալ ժամանակի և տարածություն մեջ, նրանց կարելի է մատնանշել «ահա, այն» դեիկտիկ ցուցական դերանունների միջոցով, այսինքն՝ նրանց գոյության նշանակությունը վերականգնելի է համատեքստից, մինչդեռ ’inna maḥallan wa ’inna murtaḥalan wa ’inna li al-safari iḏ maḍūw mahalan (ya‘anī fī al-dunyā) նախադասությունը զուտ գոյաբանական է, այսինքն՝ երկրի վրա կա տեղ նրանց համար։ Հատկանշական է, որ վերոնշյալ նախադասություններում զեղչված է xabar[32]-ի դիրքը, այն է.

’Inna *mālan* - ’Inna **lahum** mālan.

’Inna *Zaydan* wa *‘Amran* -’Inna **lanā** Zaydan wa ‘Amran.

’Inna lī al-safari iḏ maḍūw *mahalan* - ’Inna **lanā** mahalan.

Նույն զծային կառուցվածքը կարելի է նկատել lā al-nafiya li-l-jinsi (տեսակը ժխտող lā)-ով իրացված ասույթներում.

Xabar-ի դիրքը զեղչված	**Վերականգնված**
Lā *aḥada xayrun minka*[33].	Lā aḥada **fī al-wujūdi** xayrun minka.

31 Muḥamad Ḥusayn Dīwān al-A‘šā, ed., Cairo 1950, էջ 233։

32 Xabar-ն անվանական նախադասության ստորոգյալն է։

33 إبن يعيش , նշվ.աշխ., էջ 262։

Lā rajula afḍalu minka[34] Lā rajula afḍalu **fī al-wujūdi** minka

Կարելի է նկատել, որ ’inna (կա) և lā (չկա) մասնիկները շարահյուսական մակարդակում ունեն որոշ նմանություններ, սակայն տարբերվում են ձևաբանական և իմաստաբանական նկարագրով։

Այսպիսով, փորձելով վեր հանել ’inna մասնիկի հիմնական իմաստաբանական և ձևա-շարահյուսական առանձնահատկություններն ու գործառույթները, կարելի է ենթադրել, որ այն ի սկզբանե համարվել է դեիկտիկ մասնիկ, այսինքն՝ նշել է որևէ երևույթի՝ որոշակի՝ ժամանակի, տարածության կամ համատեքստից բխող իրադրության մեջ գոյություն ունենալու, լինելու փաստը։ Հնարավոր է, որ ԱԼԱ-ում այդ մոտեցումն ավելի շատ պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ այդ մասնիկով հիմնականում մեջբերվել է Ալլահի խոսքը։ Հարկ է նշել, որ qāla (ասել) բային միշտ հաջորդում է ’inna մասնիկով իրացված ասույթ, որպես հաստատուն, կասկածից վեր հաղորդում։ Կարելի է նկատել, որ, ’inna-ն ի սկզբանե հաստատական իմաստային երանգ հաղորդելու պատճառով աստիճանաբար ձեռք է բերել ոչ միայն որոշակի միավոր, այլև ողջ ասույթը շեշտելու, հաստատելու գործառույթ։

Ամփոփելով՝ նշենք, որ շարահյուսական մակարդակում ’inna-ի հիմնական գործառույթն իրենից հետո եկող անվան կառավարումն է, որով նա նմանվում է պարզագույն բայահիմքին (թերևս պարզագույն հիմքից միակ տարբերությունն այս մասնիկի՝ խոնարհման հարացույց չունենալն է)։ ԱԼԱ-ում, ինչպես նկատեցինք ’inna-ն ունեցել է ինքնուրույն կիրառություն՝ որպես պատասխանական բառ-նախադասություն, որով նմանվել է naʿam, bala, ’ajal դրական պատասխանական բառերին։ ’Inna-ի նման

34 Նույն տեղում։

իմաստային կիրառության դեպքերի կարելի է հանդիպել նաև այսօր՝ որպես համաձայնություն կամ հաստատական պատասխանական բառ։ Որպես մասնիկ՝ վերջինս եղանակավորող է, նախադասությանը հաղորդում է հաստատական երանգ։ Արաբերենում կան նախադասությունը շեշտող այլ մասնիկներ ևս՝ qad, lā, wallahī ..., որոնք, ի տարբերություն ’inna-ի, չունեն կառավարման գործառույթ և բայի պարզագույն հիմքի ձևա-շարահյուսական նկարագիր։

ABOUT THE MORFHOSYNTACTIC AND SEMANTIC PECULIARITIES OF THE VERB-LIKE PARTICLE ’INNA

Summary

Margarita Sargsyan
margaritasargsyan@ysu.am

***Keywords**: Verb-like particles, ’inna, semantic characteristics, morphsyntactic characteristics, reply word.*

Arabic verb-like particle *’inna* with its other “sisters” demonstrates some similarities with the verbal form in morphosyntactic level and the choice of the describing term (الحروفُ المشبَهةُ بالفعل) is generally connected to that feature. On the morphological level these particles are characterized with ending *fatha [a]*, on the syntactic level the subject after *’inna* is always in the accusative case, the same we notice in verbal sentences, when the object precedes the subject *(ḍaraba Zayan Amrun)* like in the case of verbs with governing function. All verb-like particles have the same morpho- syntactic function, but have different meanings, expressing the speaker’s certainty, suspect, possibility, wish.

The main semantic characteristics of the particle *’inna* is to emphasize, affirm the whole sentence. In this aspect, the particle *’inna* for some

functional reasons can be classified together with other tools such as *qad* in the function of indicating the certainty (*taḥqīq*), the energetic *lan*, asserting oath-words as *wa al-lahi*, *la ‘mrī* etc..Besides that *’inna* can be used as an independent affirmative reply word, confirming the preceding saying, be it another person’s or one’s own. In this aspect *’inna* resembles to affirmative independent particles such as *na‘am, bala, ajal* (yes, indeed).

О ЛЕКСИЧЕСКИХ И МОРФО-СИНТАКСИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ ЧАСТИЦЫ ’INNA

Резюме

Маргарита Саргсян
margaritasargsyan@ysu.am

***Ключевые слова**: Частицы подобные глаголу, частица ’inna, морфосинтаксический уровень, семантический уровень, значение положительного ответа.*

Частица *’inna* наряду с остальными частицами, подобными глаголу, на морфосинтаксическом уровне проявляет некоторые сходства с простейшей глагольной формой, с чем и связан выбор термина (الحروفُ المشبَهةُ بالفعل). На морфологическом уровне эти частицы, подобно глагольной форме, имеют конечную огласовку *фатха [a]*, а на синтаксическом уровне ставят имя в словоизменительную форму *naṣb*, проявляя сходства с функцией управления. Эти частицы, объединенные с точки зрения морфосинтаксической функции, отличаются своими лексическими особенностями, передавая всему предложению значения подтверждения, сомнения, вероятности или желания.

В основе лексических особенностей частицы *’inna* лежит подтверждение подлинности всего предложения. В этом отношении эта частица может иметь некоторые общие черты с такими

инструментами, передающие утвердительное значение, как *qad, wa al-lahī, lā* и т.д.. С другой стороны, одной из особенностей этой частицы можно считать проявление значения положительного ответного отдельного слова; с одной стороны в диалогах адресант с помощью этой частицы выражает свое согласие адресату, с другой стороны - утверждает свою мысль, таким образом подобая словам, имеющим значение положительного ответа, как naʻam, ajal, bala, в основе которых тоже лежит функция потверждения всего предложения со стороны адресата или адресанта.